ԷԴՎԱՐԴ ՋՐԲԱՇՅԱՆ—Թումանյան: Ստեղծագործության պրոբլեմներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, 514 էջ։

Գիրքը ներկայացնում է հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի ստեղծագործական ժառանգության (բալլադներ, քնարերգություն, քառյակներ, գեղարվեստական արձակ) ուսումնասիրությունը։ Հեղինակը լուսաբանել է Թումանյանի և ժողովրդայնության խնդիրը, որի բացահայտումը բանաստեղծի ողջ ստեղծագործության (միտումներ և բովանդակություն) գիտական վերլուծությունն է։ Մեծ ուշադրություն է դարձվել բանաստեղծի ստեղծագործության գեղարվեստական մեթոդի, ժանրային բնույթի, «մանկական բալլադների» հետազոտմանը։ Քննված են Թումանյանի արձակի սկզբունքները, վարպետության ու բանասիրական այլ հարցեր։ Գիրքն ունի մատենագիտական ցանկ։

Պատասխանատու խմբագիր՝ Ս. Ն. Սարինյան։

ՀՐԱՆՈՒՇ ԴԱՐԲԻՆՅԱՆ—Ժողովուրդների բարեկամության արտացոլումը հայ դասական գրականության մեջ (թեմաներ, սյուժեներ, կերպարներ), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, 359 էջ։

Մենագրության մեջ լուսաբանվում են հայ գրականության մեջ ժողովուրդների բարեկամության ակունքները և զարգացման միտումները, որոնք հասնում են մինչև նախամաշտոցյան շրջանի առասպելներն ու վիպական երգերը։ Ներկայացվում է ժողովուրդների բարեկամության օրինաչափորեն զարգացող, խոր, համընդհանուր ընթացքը։ Գրքում ուշադրություն է նվիրված XIX դ. հայ գրականության մեջ հումանիզմի և բարեկամության սկզբնավորմանը։ Թարգմանական արվեստին քաջահմուտ հայ դրականությունը կրկին հարություն է տալիս իր դարավոր ավանդույթներին. հայացվում են համաշխարհային գրականության լավագույն նմուշները («Հեռու-մոտիկ աշխարհների կանչը»)։ Հետաքրքրությամբ են ընթերցվում հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը պատկերող էջերը («Հուսո ջահեր, ռուս բարեկամի հայտնությունը»), որտեղ արտահայտվում է հայ ժողովրդի հոգևոր, ֆիզիկական լինելության, քաղաքական ու պետական վերածնության մեծ խորհուրդը։

Խոսվում է ժողովուրդների բարեկամության թեմայի մասին՝ հոգեհարազատություն և շատ ընդհանրություններ հայտնաբերելով աշխարհի ամենատարբեր ժողովուրդների միջև («Աշխարհի հեռուների արձագանքները, բարեկամության նոր կամուրջներ»)։ Գիրքն ունի անձնանունների ցանկ։

Պատասխանատու խմբագիր՝ Մ. Ս. Սաղյան։

ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Դառնին IX—XIV դարերում, Երևան, ՀՍՍՀ՝ ԳԱ։ հրատ., 1988, 165 էջ։

IX—XIV դդ. Դառնին Հայաստանի գյուղաքաղաքներից մեկն էր։ Գրքում (I գլուխ) մասնագիտական, վիմագրական և հնագիտական նյութերի հիման վրա ներկայացվում է բնակավայրի քաղաքական համառոտ պատմությունը, տեղագրությունը, հուշարձանները, ամրոցը և անտիկ տաճարը, որը IX—XIV դդ. և դրանից հետո էլ մնում է որպես յուրօրինակ պատմական հուշարձան։ Գրքի II գլխում խոսվում է Դառնիի նյութական մշակույթի՝ մետաղյա առարկաների, խեցեղենի, ապակի և ոսկրե իրերի ու զարդերի մասին, որը հնարավորություն է ստեղծում դիտարկելու միջնադարյան այդ գյուղաքաղաքում տարբեր արհեստների առկայության ու դրանց զարգացման հարցերը։ Դառնիի երկրագործական և անասնապահական տնտեսությունը, ապրանքային արտադրությունը, առևտրի և առևտրամշակութային կապերը, ներքին կառավարման ընդհանուր գծերը քննարկված են գրքի III գլխում։ Առանձնահատուկ ուշադրություն է նվիրվել Հայաստանի զարգացած միջնադարի գյուղաքաղաքի բնորոշման մի քանի չափանիշներին (IV գլուխ)։ Գիրքն ունի վերջաբան, ծանոթագրություններ, համառոտագրություններ, աղյուսակների ցանկ։

Պատասխանատու խմբագիր՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյան։

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ—Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30—70-ական թվականներին, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, 286 էջ։

Աշխատության մեջ շարադրված է XII դարի 30—70-ական թվականներին Բյուզանդական կայսրության և Կիլիկիայի հայկական իշխանության քաղաքական և եկեղեցական պատմությունը։ Աշխատության I գլխում լուսաբանված է Հովհաննես Բ Կոմնենոսի (1118—1148) արևելյան քաղաքականությունը, վերլուծված են նրա առաջին (1136—1138) և երկրորդ (1142—1143) ռազմարշավները դեպի Կիլիկիա։ Խոսվում է XII դարի 30-ական թվականներին Կիլիկիայի Ռուբինյան հայկական իշխանության և Մանուել Ա Կոմնենոսի արևելյան քաղաքականության մասին։ Աշխատության II գլխում առանձնահատուկ ուշադրություն է նվիրվել Թորոս Բ-ի կողմից Ռուբինյան հարստության վերականգնմանը։ Քննարկված է XII դարի 40—70-ական թթ. Ռուբինյան իշխանության և Կիլիկիայի բյուզանդական կառավարիչների իշխանության ժամանակը։ Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական դիվանագիտական հարաբերությունների մասին պատմվում է հետազոտության III գլխում։

Աշխատությունն ունի ներածական բաժին, հապավումներ, ամփոփում (ռուսերեն) և ռպարիշ անվանացանկեր։

Պատասխանատու խմբագիր՝ Պ. Մ. Մուրադյան։